

Խոսքով Թորոտյան

ՄԻԺԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԻ ԱՌՆՁԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՁ ԳՐՈՑ ՀԵՏ

Իրավունքը վարքագծի կանոնների համակցություն է, հասարակության անդամների բազմազան իրավահարաբերությունները կարգավորող նորմերի ամբողջական ու նպատակասլաց համակարգ: Իրավունքը հասարակության կամքի զրահորում է, բայց հասարակության ոչ բոլոր անդամների, այլ նրա մի մասի միայն, այն մասի, որն իշխում է տնտեսապես, ուստի և քաղաքականապես: Իրավունքը, հետևապես, գերիշխելու ու ենթարկվելու հարաբերություն է, այդ հարաբերության արտահայտություն: Գերիշխելու ու ենթարկվելու հարաբերության հիմքը, սակայն, իրավունքի շրջանակներից դուրս է, և գտնվում է տնտեսական հարաբերությունների ոլորտում: Տնտեսական, արտադրական հարաբերությունների մարզում զրահորված իրավիճակը վավերացնելու ու ամրապնդելու համար է, որ ստեղծվում են իրավունքի նորմերը, իրավունքի համակարգն ամբողջապես: Այդ պատճառով իրավունքի աղբյուրը մեկն է՝ տվյալ հասարակության գոյության նյութական պայմանների ամբողջությունը: Իրավագիտության մեջ, սակայն, իրավունքի աղբյուր հասկացությունը կիրառվում է նաև հատուկ իմաստով, զուտ իրավաբանական-տեխնիկական առումով: Այս վերջին դեպքում իրավունքի աղբյուր է կոչվում այն հատուկ ձևը, որ ստանում է իրավանորմը: Որպես իրավունքի աղբյուր իրավանորմի այդ հատուկ ձևերն են օրենքը, իրավասու մարմինների կողմից հրապարակված նորմատիվ ակտերը և այլն:

Ժամանակակից հասարակության համար իրավունքի ձևական աղբյուրը հիմնականում օրենքն է: Սակայն հասարակությունը նախընթաց զարգացման շատ երկար շրջան է անցել մինչև այն կետը, երբ իրավունքի հիմնական աղբյուրը դարձել է օրենքը: Իսկ մինչ այդ տարրեր կացութաձևերում, նույնիսկ միևնույն կացութաձևի զարգացման տարբեր շրջաններում գերակշռել է իրավունքի ձևական աղբյուրներից մեկը կամ մյուսը, երբեմն մի քանիսը միասին, ըստ որում, միշտ չէ, որ օրենքը եղել է առաջին տեղում: Ընդհակառակը, հասարակության զարգացման շատ երկարատև մի շրջանում օրենքը իրավունքի աղբյուրների շարքում համարյա չի նկատվում: Պատմականորեն բացատրելի երևույթ է սա:

Իրավական արժեք ձևով բերելու համար պարտադիր չէ, որ նորմը օրենսդրական հատուկ ձևավորում ստանա: Նորմը իրավական նշանակություն կարող է ունենալ, և իրոք ունեցել է, նաև առանց արտահայտման հատուկ ձևի, այդ ձևն ստանալով հասարակության մեջ որոշակի կարգի անմիջական իրականացման ընթացքում: Այսինքն, իրավանորմը զրահորվելով հասարակական հարաբերությունների որոշակի փաստական կարգում, կարող է արտահայտվել նաև հենց այդ կարգի միջոցով: Դեռևս Բ դարում հռոմեացի իրավաբաններից մեկը գրում էր. «Հենց ի վեր հաստատված սովորությունը

արժանավորապես պահպանվում է որպես օրենք, և դա այն իրավունքն է, որի մասին ասվում է, որ հաստատված է բարբերով: Չէ որ, իրենք՝ օրենքները կապում են մեզ ոչ որևէ այլ պատճառով, քան նրանով, որ դրանք ընդունված են ժողովրդի որոշմամբ: Արժանավորապես պահպանվում է և այն, որ ժողովուրդը առանց որևէ գրառման արտահայտում է իր կամքը իրականում և փաստերով»¹:

Հռոմեացի իրավաբանը ձիշտ կերպով նկատել է, որ իրավանորմը կարող է արտահայտվել ոչ միայն արտաքին դրսևորման հատուկ ձևով, այլև հասարակական հարաբերությունների տնօրյա իրացման փաստական որոշ կարգի մեջ և դրա միջոցով: Կոնկրետ գործով և փաստերով արտահայտվող ժողովրդի կամքի դրսևորման եզակի ակտերը առանց որևէ գրառման դրոշմելու համար բնական մի եղանակ էր մնում՝ նույն ակտերի օր առ օր կրկնությունը: Այդպիսով, որևէ դեպքի կապակցությամբ արտահայտված վարվելակերպը տևական կրկնության հետևանքով դառնում է սովորույթ, վերածվում է ընդհանուր նորմի և դրանով իսկ իրավունքի աղբյուրի: Այս երևույթը բնութագրական է հատկապես ավատատիրական կացութաձևի համար: Այդ կապակցությամբ Մարքսը գրում է. «Կարգ ու կանոնն է հենց արտադրության յուրաքանչյուր եղանակի հասարակական կայունացման ու հետևաբար նրա հաջորդական ազատագրման ձևը հասարակ պատահականությունից և քառահանգից: Նույն այս ձևին հասնում է ինչպես արտադրության պրոցեսի, այնպես էլ սրան համապատասխանող հասարակական հարաբերությունների լծացածության սլայմաններում սրանց սոսկական վրկնվող վերարտադրության միջոցով: Եթե տվյալ ձևը հարատևել է միառժամանակ, ապա նա ամրապնդվում է իբրև սովորույթ և ավանդություն և, վերջապես, սրբագործվում է իբրև դրական օրենք»²:

Ամենուր դիտվող պատմական օրինաչափությամբ իրավական սովորույթն ու ավանդությունը դրական օրենքի աստիճանի են բարձրացվել միշտ շատ ավելի ուշ, քան վերջնականապես ձևավորվել են սովորույթն ու ավանդությունը:

Ժամանակակից Եվրոպայի համարյա բոլոր ժողովուրդների միջնադարյան դատաստանագրքերը որպես կանոն սովորութական իրավունքի ժողովածուներ են, զրի առնված մեծ մասամբ մասնավոր անձանց կողմից, հիմնականում ԺԳ—ԺԵ դարերում: Այդպես են կազմվել, օրինակ, Sachsenspiegel (ԺԳ դար, հեղինակ է համարվում էյկե ֆոն Ռեպկովը), Coutumes de Beauvaisis (կազմել է ֆրանսիացի հայտնի իրավաբան Ֆիլիպ Բոմանուարը 1282 թ.), ալբանական սովորութական իրավունքի ժողովածուն (ԺԵ դար, վերագրվում է Լեկա Ղուկադինին), վերբոցիի հունգարական օրենքները (1504 թ.), Լեհական պրավդան (ԺԳ դար), չեխ Կոնրադ Օտոնի ստատուտները (ԺԲ դար), Ստեփան Թագավորի սերբական դատաստանագիրքը (ԺԴ դար) և այլն:

Ինչպես տեսնում ենք, ազգային անդրանիկ դատաստանագրքերը որպես կանոն սովորութական իրավունքի ժողովածուներ են: Այսպիսով, եթե նկատի

¹ (Մեղ չհաջողվեց ձևոր բերել Corpus Juris-ի բնագիրը, այդ պատճառով թարգմանությունը կատարել ենք ռուսերենից): Տե՛ս «Римское частное право», Москва, 1948, էջ 28:

² Կ. Մարքս, Կապիտալ, հատոր 3-րդ, Երկրորդ մաս, Երրորդ գիրք, Երևան, 1949, էջ 331—332: Հայերենում թարգմանված էր այսպես. «...Նա այս ձևին հասնում է ինչպես արտադրության պրոցեսի, այնպես էլ սրան համապատասխանող հասարակական հարաբերությունների կայունացման պայմաններում...»: Ուղղել ենք համաձայն բնագրի՝ «...Sie erreicht diese Form bei stagnanten Zuständen sowohl des Produktionsprozesses wie der ihm entsprechenden gesellschaftlichen Verhältnisse...» Տե՛ս Karl Marx, Das Kapital, Dritter Band, Buch III, Berlin, 1957, էջ 844:

շունենանք իրավունքի նյութական աղբյուրը, որը ամենուր ու միշտ ժիւնույնն է, ապա ավատատիրական կացութեան ժամանակ իրավունքի ձևական աղբյուրը գերազանցապես սովորույթն է:

Պատմական այս օրինաչափությունը պետք է որ գործած լինեն նաև միջնադարյան Հայաստանում, բայց հայկական իրավական հուշարձաններից ստացվող արտաքին տպավորությունը, թվում է թե, այլ է:

Մխիթար Գոշի Դատաստանագրքին ուսումնասիրած գրեթե բոլոր հետազոտողները նշել են, որ մովսիսական օրենքները ղգալի ազդեցություն են գործել Մխիթարի Դատաստանագրքի վրա: Ընդամենն այդ ազդեցությունն արտահայտվել է ոչ միայն իրավական ինչ-ինչ սկզբունքների կամ ընդհանուր դրույթների փոխառությամբ, այլ շատ ավելի արմատական ու ընդարձակ ձևով, այն է՝ մովսիսական բաղմամբիվ օրենքների բառացի առկայությամբ Դատաստանագրքում: Հայկական իրավունքի պատմությանը քաջատեղյակ պրոֆ. ի. Սամվելյանն, օրինակ, ամփոփելով նաև նախորդ մի քանի ուսումնասիրողների տեսակետն այս հարցի մասին, գրում է. «Հիրավի, մովսիսական օրենքները մեծ ծավալով ներս էին թափանցել հայ իրավունքի մեջ, մասնավորապես գրավոր օրենքների ժողովածուներում... Այդ են վկայում... Մխիթար Գոշի Դատաստանագրքի հոդվածների մեծամասնությունը... մովսիսական օրենքները մտել են ոչ միայն Մխիթար Գոշի Դատաստանագրքի մեջ, որի ամբողջ բեական իրավունքը, ստեղծարարական նորմերը և մասամբ պատմական ու ժողովրդի իրավաբանական նորմերը նույն հետազոտությամբ, երբեմն էլ հայ կենցաղի հարմարեցրած փոքր ինչ փոփոխումներով, տոգորված են այդ օրենքներով»: Մեջբերումներն ընդամենն իրոք, որոշ տեղ են գրավում Դատաստանագրքում, բայց դա դեռ բավարար ապացույց չէ այն տեսակետի, որի ցայտուն ներկայացուցիչն է պրոֆ. ի. Սամվելյանը: Վերոբերյալ տեսակետն արտահայտում է խնդրի արտաքին, երևութական կողմը միայն, և շատ հեռու է փաստական կապերի իրական պատկերը լինելուց: Քննարկվող հարցն ավելի խորն է ուսումնասիրել գերմանացի հայագետ Հ. Կարստը: Նա գրում է. «Մենք չենք կարող թույլ տալ մեզ մոլորվելու աշխատության հիմքում ընկած մովսիսական-կանոնական սկզբունքների թվացող գերակշռությամբ, որովհետև մովսիսական-կանոնական սկզբնաղբյուրի այդ հատվածները շատ դեպքերում բացառապես գուտ արտաքին շփման կետեր են՝ դրանցից կատարվող կամայական մեկնաբանության և Մխիթարի կողմից զարգացվող իրավական դրույթները շարադրելու համար: Դա գիտական այն սուբստրատն է, որի հեղինակություն վրա հիմնվում է մեկնաբանը, դրանից էլ բխեցնելով իր սեփական ծանրակշիռ իրավական բեռիները»³:

Կարստը մասամբ ճիշտ է նկատել, որ մովսիսական օրենքները Մխիթարի համար եղել են գուտ արտաքին հենման կետ, իր սեփական իրավական դրույթները զարգացնելու համար: Բայց Կարստը ճիշտ չէ, երբ պնդում է, որ մովսիսական օրենքները (կանոնները մի կողմ ենթ թողնում) եղել են «գիտական սուբստրատ», այսինքն հանդիսացել են այն գիտական հիմքը, որի վրա Մխի-

³ ի. Սամվելյան, Հին հայ իրավունքի պատմությունը, հատոր 1, Երևան, 1939, էջ 56 և 58: Ընդգծումը մերն է:

⁴ J. Karst, Grundriss der Geschichte des armenischen Rechtes, Zeitschrift für vergleichende Rechtswissenschaft, XIX Band, Stuttgart, 1906, 405. Այսուհետև՝ J. Karst... Ընդգծումը հեղինակինն է:

թարը կառուցել է իր Դատաստանագրքի ամբողջ շենքը: Բացի դրանից, ճիշտ չէ Կարստի նաև այն տեսակետը, ըստ որի Դատաստանագրքի հիմքում ընկած է մովսիսական-կանոնական սկզբնաշյուղը: Այդպիսի հիմքով դատաստանագրքը ստեղծելը չէր Մխիթարի նպատակը, և ոչ էլ ժամանակի պահանջն էր այդ: Թե՛ Կանոնգիրքը, և թե՛ մովսիսական օրենքները Մխիթարից դեռ շատ առաջ գոյություն ունեին և լայնորեն տարածված էին Հայաստանում: Կանոնգրքի և մովսիսական օրենքների մեխանիկական, կամ թեկուզ ինչ-որ սկզբունքով միաձուլումը մի ամբողջության մեջ, դարձյալ չէր կարող նշանակություն ունենալ, որովհետև, եթե դրանք առանձին-առանձին կամ միաժամանակյա գոյություն մը չէին կարողանում լուծել այն հարցերը, որոնց լուծման համար ստեղծվեց Դատաստանագրքը, ապա դրանց միաձուլումը ևս ակնկալվող արդյունքը չէր կարող տալ: Դատաստանագրքի հիմքում ընկած է հայկական սովորության կանոնները: Աստվածաշնչի «գիտական հեղինակությունը» չէ պատճառը, որ Մխիթարը գիմում է դրան: Հատվածներն Հնդամատյանից Դատաստանագրքում մեջ են բերված հաճախ զուտ ձևի, արտաքին տեսքի համար, և եթե, չնայած այդ բոլորին, Մխիթարն, այնուամենայնիվ, գիմում է Աստվածաշնչի հեղինակությանը, ապա, ինչպես կտեսնենք ստորև, դրա պատճառը բոլորովին այլ է:

Հայտնի է, որ Վ. Բաստամյանցը ամենայն մանրակրկիտությամբ նշել է Դատաստանագրքում տեղ գտած Աստվածաշնչի թե՛ ամբողջական հոգվածները, և թե՛, նույնիսկ, առանձին արտահայտություններն ու դարձվածքները: Բայց, ըստ Բաստամյանցի, Դատաստանագրքում կան մի շարք այնպիսի հոգվածներ, որոնց աղբյուր կարելի է համարել հավասարապես թե՛ Հնդամատյանը, թե՛ Կանոնգիրքը և թե՛ սովորության կանոնները: Օրինակ՝ Դատաստանագրքի երկրորդ մասի 123-րդ հոգվածի վերաբերյալ ծանոթագրության մեջ Բաստամյանցը գրում է. «Թեպետ սույն հոգվածը հանել է Մխիթարը ժողովրդական սովորություններից, բայց հոգվածի հորինելու թերևս միտք է տվել նրան մովսիսյան օրենքը չափի և կշռի մասին.—տե՛ս Ղևտ. ԺԹ 35, 36. Բ. Օրին. 13.—15. այլև Առակք Ի. 10⁵: Կամ, օրինակ, առաջին մասի 14-րդ հոգվածը: Բաստամյանցը թեև ամբողջությամբ այն չափերտների մեջ է վերորդել, ցույց տալով այդպիսով, որ անմիջականորեն Մխիթարի գրչին է պատկանում, բայց ծանոթագրության մեջ որպես աղբյուր ցույց է տվել «Ելքի» ԽԱ 12, 18—27, «Ղևտականքի» ԻԴ 17, 19, 21⁶:

Կարստը նույնպես անդրադարձել է այս հարցին: Նա կազմել է մի աղյուսակ⁷, որի մեջ հերթականությամբ ղեկավարել է Դատաստանագրքի հոգվածների գլխահամարները և դրանց դիմաց նշել համապատասխան աղբյուրները: Ըստ որում Կարստը կետեր է դրել Դատաստանագրքի այն հոգվածների դիմաց, որոնց համար որպես հիմք հավասարապես ընդունելի են տարբեր աղբյուրներ, ինչպես վերը բերված դեպքերում, կամ էլ աղբյուրը ստուգապես որոշել հնարավոր չի եղել: Ըստ Կարստի աղյուսակի Դատաստանագրքի այն հոգվածների

⁵ «Դատաստանագիրք հայոց», հրատարակություն Վ. Բաստամյանցի, Վաղարշապատ, 1880 թ., էջ 436, ծանոթ. 973: Այսուհետև՝ «Դատաստանագիրք հայոց»:

⁶ Նույն տեղում, էջ 111, ծանոթ. 194:

⁷ J. Karst..., էջ 397—403:

քանակը, որոնց աղյույրը Հնգամատյանն է, թեև շատ ավելի քիչ է, քան ցույց է տվել Բաստամյանցը, բայց և այնպես զգալի թիվ է կազմում:

Կարստի աղյուսակի համաձայն մովսիսական օրենքները աղբյուր են հանդիսացել Դատաստանագրքի առաջին մասի 35—43 և երկրորդ մասի հետևյալ հոդվածների համար. 20—21, 23—34, 36—46, 50—53, 62—63, 66—88, 117 (մասամբ):

251 կամ 254 հոդվածից 61 հոդված, այսինքն Դատաստանագրքի ընդհանուր ծավալի մոտ մեկ քառորդը, այդպիսով, բաժին է ընկնում Հին Կտակարանին: Այս երևույթն ինքնին բացատրություն կարիք է զգում: Դա դառնում է անհրաժեշտություն, եթե նկատի ունենա՞նք, որ ԺԲ դարի մի Դատաստանագրքում զգալի տեղ են գրավել այնպիսի օրենքներ, որոնք ստեղծվել են դրանից մոտ 2000 տարի առաջ, հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական բոլորովին այլ պայմաններում:

Առաջադրված հարցերը ամենակարճ ճանապարհով պարզելու համար պետք է դիմենք այն հոդվածներին, որոնց աղբյուրը մովսիսական օրենքներն են համարվում: Սկսենք Կարստի աղյուսակի առաջին, այն է Դատաստանագրքի առաջին մասի 35-րդ հոդվածից, որի համար որպես աղբյուր թե՛ Բաստամյանցը և թե՛ Կարստը մատնանշում են «Ելքի» ԻԲ 1—4 համարները:

Դատաստանագիրք, 1, 35

Ելք, ԻԲ 1, 4

Զեկեղեցույսն դողացեալ ևւ կորուսեալ, եւ կամ վաճառեալ որ ոչ իցէ զարձ — հինգերորդ հատուսցէ եւ զոչ կորուսեալսն՝ կըրկին: Եւ զապաշխարութիւնն եցոյց կանոնքն:

Իսկ եթէ գողացցի ոք արջառ կամ ոչխար, եւ սպանցէ կամ վաճառեցէ, հինգ արջառ ընդ արջառոյն տուժեսցի եւ չորս ոչխար ընդ ոչխարին... Իսկ եթէ ըմբռնեսցի եւ գողցի ի ձեռին նորա գողօնն՝ յարջառոյ եւ յիշոյ մինչեւ ցոչխար, կրկին տուժեսցի:

Հետևողական լինելու համար Բաստամյանցն ու Կարստը պետք է ցույց տային «Ելքի» ԻԲ 1 և 4-րդ համարները միայն, որովհետև 2-րդը և 3-րդը վերաբերվում են բոլորովին ուրիշ հարցի: Մովսիսական օրենքը գողություն նախատեսող շատ սովորական քրեա-իրավական մի նորմ է, որի նմանը կա միջնադարյան համարյա ամեն մի դատաստանագրքում: Սակայն քննենք հանցակազմը: Հասկանալի պատճառով հանցակազմի սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը տվյալ դեպքում անտեսվում են: Ընդունենք, որ հանցակազմի օբյեկտիվ կողմը երկու դեպքում էլ նույնն է: Վերորերյալ նորմերում տարբեր են հանցագործության օբյեկտները: Մովսիսական օրենքը նշել է հանցագործության կոնկրետ օբյեկտ՝ արջառ կամ ոչխար: Ըստ Դատաստանագրքի հանցագործության օբյեկտը որոշակի կազմակերպության սեփականությունն է, անկախ առարկայապես արտահայտվելու ձևից: Աստվածախոս օրենսդրի իրավաբանական միտքը հանցագործության անմիջական օբյեկտների պարզունակ թվարկման ուղիներում է դեգերում: Ընդհանրացումներն ու վերացական ըմբռնումները հասուչ են օրենսդիր մարգարեի մտքին: Դրան հակառակ, Մխիթարն հասել է խոշոր ընդ-

հանրացման, ամենարազմազան առարկաներ միավորելով մի խմբի մեջ, ըստ սեփականատիրական պատկանելության:

Ինչպես տեսնում ենք, քննվող հանցակազմերը սկզբունքորեն տարրեր են իրարից, այնպես որ, մովսիսական օրենքը չէր կարող Դատաստանագրքի տրված չափով հոգվածի աղբյուր լինել: Հակառակ դեպքում դրանց մեջ անցկացվող կապն այնքան առաձգական է դառնում, որ նույնպիսի հաջողությամբ մովսիսական այդ օրենքը կարելի է աղբյուր համարել, նույնիսկ, ժամանակակից օրենսդրությունում գոյություն վերաբերյալ հոգվածների համար:

Բայց, գուցե, մովսիսական այդ օրենքը Դատաստանագրքի նշված հոգվածի աղբյուր համարելու հիմք է հանդիսացել այն, որ երկու նորմերում էլ նույնն են պատժատեսակն ու պատժաչափը (Մխիթարի կողմից սահմանված ապաշխարությունը տվյալ դեպքում անտեսում ենք): Ոչ: Դատաստանագրքի առաջին մասի 28-րդ հոգվածում ասված է. «Եթե ոք ժառանգաւոր կամ ժողովրդական առեղ է սուրբ եկեղեցւոյ մոմեղէն և կամ ձէյլ, որոշեսցի և հնգապատիկ տուժեսցի, որով առն անօթով ոսկեղինաւ սրբեցելով...»:

Այս դեպքում ևս հանցագործության օրյեկտը եկեղեցապատկան առարկա է, իսկ պատժաչափն էլ դարձյալ նույնն է՝ գողացվածի հնգապատիկը: Ակրնհայտ է, որ Մխիթարը ղեկավարվում է որոշակի սկզբունքով: Եկեղեցու գույքի դեմ ուղղված հանցագործությունների համար սահմանվում է ավելի խիստ պատիժ: Մխիթարն ինքը կարող էր այդ անել, թեկուզ այն պատճառով, որ նա եկեղեցու ջատագով էր, և նրա ամենաաչքի ընկնող ներկայացուցիչը Արևելյան Հայաստանում: Բայց, եթե այդ սկզբունքի համար այնուամենայնիվ պետք է աղբյուր որոնել, ապա դա, թերևս, Կլեմի Կէ կանոնն է, սրբ նույնությամբ մեջ է բերված Դատաստանագրքում որպես 1-ին մասի 28-րդ հոգված: Այս բոլորից բացի «Ելքի» ԻԲ գլխի 1, 3, 4 համարները որպես աղբյուր: օգտագործված է մի այլ, այն է Դատաստանագրքի երկրորդ մասի 39-րդ հոգվածի համար: Այս լրնույթի մի օրինակ ևս:

Դատաստանագրքի առաջին մասի 36-րդ հոգվածի վերաբերյալ ծանոթագրության մեջ Բաստամյանցը գրում է. «Կանոնս առած է բառ առ բառ մովսիսական օրենքից—Ելից ԻԲ 16, 17.—Բ. Օրին. ԻԲ. 23, 28, 29»⁸: Վարստր ևս այդ հոգվածի աղբյուր է համարում մովսիսական օրենքը⁹: Սակայն այդպես է արդյոք իրականում: Դիմենք սկզբնաղբյուրներին:

Դատաստանագիրք, 1, 36

Ելք, ԻԲ, 16—17

Իսկ եթե խարիցէ ոք զկոյս խօսեցեալ և անջեսցէ ընդ նմա, վարձանօք վարձեսցէ զնա իւր կրնութեան: Եթէ ոչ առնուցու յանձն հայրն տալ զնա նմա, տուժեսցի արծաթ հօր նորա որպէս իցէ: Կ վարձանք կուսից:

Իսկ եթէ ոք խարեսցէ զկոյս զոչ խօսեալ և անջեսցէ ընդ նմա, վարձանօք վարձեսցի զնա իւր կրնութեան: Եւ եթէ ոչ առնուցու յանձն հայր նորա տալ զնա նմա կնութեան, տուժեսցի արծաթ հօր նորա, որպէս իցեն վարձանք կուսից:

⁸ «Դատաստանագիրք հայոց» Լջ 130, ծանոթ. 241:

⁹ J. Karst..., Լջ 398:

Փակագծերի մեջ նշենք, որ Դատաստանագրքում «ոչ» բառի բացակայությունը «խօսեցեալ» բառից առաջ գրչադրական վրիպակ չէ: Բոլոր ձևագրերն այդ ընթերցումն են տալիս:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ Մխիթարը նույնությամբ, բառ առ բառ, ինչպես գրում է Բաստամյանցը, ընդօրինակել է մովսիսական օրենքը: Սակայն, իրականում դրանք բոլորովին տարբեր նորմեր են, այնքան՝ որքան սկզբունքորեն տարբեր են ոսոնձգության օրենքները: Մի դեպքում խոսքը «խօսեալ» (նշանված, նշան դրված) կույսի մասին է, մյուս դեպքում «ոչ խօսեալ» (չնշանված): Ժամանակի կրոնա-եկեղեցական և բարոյա-իրավական հայեցողությամբ նրանց «խօսեալ» և «ոչ խօսեալ» կույսերի ստատուսները բոլորովին տարբեր են:

Աստվածաշնչում նորմը սահմանափակվում է վերը բերվածով, իսկ Մխիթարի մոտ հոգվածն ունի բավական ընդարձակ մի շարունակություն, որը շատ բանով տարբերվում է մովսիսական օրենքից: Այս բոլորից բացի «ոչ խօսեալ» կույսերի հարցը Մխիթարը քննում է Դատաստանագրքի առաջին մասի 20-րդ հոգվածում:

Նման օրինակների թիվը կարելի է շարունակել, բայց բերածն էլ բավական է եզրակացնելու համար, որ Բաստամյանցը և Կարստը մովսիսական օրենքները հաճախ աղբյուր են համարել Դատաստանագրքի այնպիսի հոգվածների, որոնք կամ ոչ մի կապ չունեն այդ օրենքների հետ, կամ արմատապես տարբերվում են դրանցից: Այդպիսով, արհեստականորեն մեծացվել է Աստվածաշնչի մասսան Դատաստանագրքում:

Այդուհանդերձ չի կարելի չնկատել, որ նույնիսկ այն դեպքերում, երբ Մխիթարը սահմանում է միանգամայն տարբեր նորմ, քան աղբյուր համարվող մովսիսական օրենքն է, նա նույնությամբ պահպանում է վերջինիս ձևը, լեզվա-ոճական արտաքին պատկերը, ինչպես օրինակ, վերը բերված 36-րդ հոգվածի դեպքում: Բնականաբար հարց է առաջանում. ինչո՞ւ է այդպես վարվել Մխիթարը: Եթե Մխիթարը նպատակ է ունեցել յուրացնելու մովսիսական օրենքները, ապա նա կարող էր դրանք շարադրել իր բառերով, կամ, եթե անձեռնմխելի էր թողնում ձևը, առավել ևս չպետք է փոխեր բովանդակությունը: Մինչդեռ նա ընթացել է հակառակ ուղիով: Արմատապես փոխել է բովանդակությունը, բայց պահպանել է ձևը: Այս հարցի պատասխանը կտրվի փոքր ինչ հետո:

Դատաստանագրքի հոգվածների ուշադիր քննությունից պարզվում է վերին աստիճանի հետաքրքիր մի երևույթ ևս: Մխիթարը երբեմն հենվում է մովսիսական օրենքների վրա այնպիսի դեպքերում, երբ դրա անհրաժեշտությունը բոլորովին չկա և այն տպավորությունն է ստեղծվում, որ վկայակոչությունը կատարված է զուտ ձևի համար:

Օրինակ. Դատաստանագրքի, առաջին մաս, հոգված 38.

«Եւ ել որդի կնոջ Իսրայէլացոյ եւ նա էր որդի առն Եգիպտացոյ ի մէջ որդոցն Իսրայէլի. եւ կռուցան ի բանակին որ յԻսրայէլացոյ անտի էր եւ ալդ մի Իսրայէլացի: Եւ անուանեալ որդի կնոջն Իսրայէլացոյ զանունն անէծ եւ ածին առ Մովսէս, եւ անուն մօր նորա Սաղամիթ, զուստր Դարևրայ յազգէ Դանայ: Եւ արկին զնա ի պահ զատել զնա հրամանաւ Տևառն: Եւ խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ՝ հանէք զայրն որ անէծ արտաքոյ բանակին, եւ դիցեն որ լուանն՝ զձեռնն իւրեանց ի վերայ գլխոյ նորա եւ քարկոծեսցեն զնա ա-

մենայն ժողովուրդին: Եւ ընդ որդիսն Իսրայէլի խօսեցցիս եւ ասացես ցնոսա՝
այր ոք որ անիծանէ զԱստուած՝ մեղս ընկալցի. զի անուանեաց զանուն Տեառն՝
մահու մեռցի, քարընկէցութեամբ քարկոծեցեն զնա՝ ամենայն ժողովուրդին:
Եթէ պանդուխտ իցէ եւ եթէ բնակ, յանուանել նորա զանուն Տեառն սատակես-
ցի: Եւ խօսեցաւ Մովսէս ընդ որդիսն Իսրայէլի, եւ հանին զայրն որ անէծն
արտաքոյ բանակին եւ քարկոծ արարին զնա քարամբք ամենայն ժողովուրդին
եւ որդիքն Իսրայէլի արարին որպէս պատուիրեաց Տէր Մովսէսի:

Իրաւացի է զդատաստանս զայս յեղափոխել այսպէս—Եթէ ոք շարժեալ
ի սատանայէ զանունն Քրիստոսի հայհոյէ, կամ զխաչ, կամ զեկեղեցի, կամ
զքահանայ ի կոիւն իւրեանց, կամ զմկրտութիւն, եթէ մին յայլազգեաց իցէ,
որպէս եւ անդ պատահեաց, եթէ քարկոծ առնել եւ եթէ այլով օրինակաւ սպա-
նանել արժան է. ապա թէ քրիստոնեայք—մահու դատաստան լիցի, քննելով
զպատահումնն»:

Մխիթարի խոսքն սկսվում է «Իրաւացի է զդատաստանս զայս յեղափոխել
այսպէս» բառերով: Մնացածը վերցված է Աստվածաշնչից: «Ղևտականի» ԻԴ
գլխից այդ երկարաշունչ հատվածը Մխիթարը մեջ է բերել հիմնավորելու հա-
մար այն պարզ դրույթը, որ Քրիստոսի անունը, խաչը և այլն հայհոյողը պետք
է պատժվի: Բայց առանց Աստվածաշնչի էլ աշխարհի բոլոր կրօնները բոլոր
ժամանակներում խստորեն պատժել են բոլոր նրանց, ովքեր չէ թե բմբուսա-
ցել, այլ, նույնիսկ, անվանարկել են այդ կրօնի սրբությունները և այլն: Այս
հարցում քրիստոնեությունը, թերևս, ամենից մոլեռանդն է եղել: Մխիթարը
բացառություն չի կազմում: Քննվող հոգվածի սանկցիայի խստությունն արդեն
Բաստամյանցն է նկատել: Նա գրում է. «Մեր հեղինակը, որ ընդհանրապես
շատ մեղմ է, այս մի անգամ շատ խիստ է և թույլատրում է մահու դատավը-
ճիւղ»¹⁰: Առանց Աստվածաշնչից կատարված երկարաձիգ մեջբերման էլ Մխի-
թարի սահմանած նորմը ժամանակին համարվելու էր սովորական, բնական և
անհրաժեշտ նորմ:

Զնայած դրան, Մխիթարն անհրաժեշտ է գտել, նույնիսկ, այդպիսի նորմը
վավերացնել մովսիսական համապատասխան օրենքով: Բնականաբար ծագող
«ինչու»-ին գոյություն ունեցող բացատրությունները չեն պատասխանում:
Մնում է ենթադրել, որ մովսիսական օրենքներին դիմելիս Մխիթարը հետա-
պնդել է այլ նպատակներ:

Մովսիսական սկզբնաղբյուրի շարքում դասվող հոգվածներից ավելի մեծ
թիվ են կազմում այնպիսիները, երբ Մխիթարը մեջ բերելով մովսիսական օ-
րենքը վերափոխում է այն կամ ժամանակի պայմանների կամ էլ իր իրավա-
հայեցողության համեմատ: Այդպիսի դեպքերում նա գրում է. «Իրավացի է
զդատաստանս զայս յեղափոխել այսպէս»¹¹, կամ՝ «Պարտ է եւ զայս դատաս-
տան այսպէս իմանալ»¹², կամ՝ «Եւ զայս ըստ օրինացն լրմամբ ընկալցին»¹³,
կամ՝ «Այդորիկ ըստ օրինացն... իսկ դատաստան այս լիցի»¹⁴, կամ՝ «Իսկ մեղ
փոխեալ լիցի այսպիսի լրմամբ»¹⁵ և այլն:

¹⁰ Պատաստանագիրք հայոց, էջ 133, ծանոթ. 245:

¹¹ Պատաստանագիրք հայոց, էջ 133:

¹² Նույն տեղում, էջ 134:

¹³ Նույն տեղում, էջ 138:

¹⁴ Նույն տեղում, էջ 337:

¹⁵ Նույն տեղում, էջ 338:

Այսպիսի դեպքերում վերափոխությունն հաճախ այնքան արմատական չէ, որքան է կրում, հոգվածն այնքան է հեռանում եկեղեցից, որ դառնում է բոլորովին նոր ու ինքնուրույն նորմ, իրավական նոր բովանդակությամբ:

Օրինակ. Դատաստանագիրք, առաջին մաս, հոգված 42.

«Եւ եթէ եւանդիցես ի պատերազմ ի վերայ թշնամեաց քոց եւ մատենացէ զնոսա Տէր Աստուած քո ի ձեռս քո, եւ աւարեսցես զաւար նոցա: Եւ տեսանիցես յաւարին կին գեղեցիկ տեսւեամբ, եւ ցանկանայցես նմա եւ առցես զնորեկ կնութեան: Եւ տարցես զնա ի տուն քո եւ գերծցես զգլուխ նորա, եւ սրբեսցես զեղբունս նորա, եւ հանցես զհանդերձ գերութեան նորա, եւ նստցի ի տան քում եւ լացցէ զհայր եւ զմայր իւր զաւուրս ամսոյ միոյ, եւ ապա մտցես տու նա եւ բնակեսցես ընդ նմա եւ եղիցի քո կին: Եւ եղիցի թէ ոչ հաճեսցիր ընդ նմա՝ արձակեսցես զնա ազատ եւ վաճառելով մի վաճառեսցի ընդ արծաթոյ, եւ մի անարգեսցես զնա քանզի լլկեցեր զնա:

Եւ զայս ըստ օրինացն լրմամբ ընկալցին. թէ պատահի քրիստոնէի—նախ մկրտել եւ զօրինակ հնութեան բառնալ եւ ապա առնուլ կին ըստ կարգի ամուսնութեան: Ոչ եթէ յորժամ հաճեսցի՝ ոչ արձակէ ազատ, այլ եւ ոչ բնաւ արձակել առանց բանի պոռնկութեան իշխան է»:

Այս հոգվածի առաջին հատվածը բառ առ բառ ներկայացնում է «Երկրորդումն օրինաց» գրքի ԻԱ գլխի 10—14 համարները: Բուն մխիթարյանն սկսվում է «Եւ զայս ըստ օրինացն լրմամբ ընկալցի» բառերով: Դժվար չէ նկատել, որ Մխիթարը սահմանում է ուղիղ հակառակը այն նորմի, որ պարունակում է մովսիսական օրենքը: Ըստ այս վերջինի ամուսինը իրավունք ունի տվյալ դեպքում արձակելու կնոջը, ըստ Մխիթարի՝ ոչ. մի բացառությամբ միայն: Մխիթարը ղեկավարվում է իր իրավահայեցողությամբ, որը խարսխված լինելով ավատատիրական հասարակական հարաբերությունների և քրիստոնեության բարոյական ըմբռնումների վրա, չէր կարող չտարբերվել հուդայականությունից:

Աներկբայելի է, որ ինչպես հենց նոր բերված, այնպես էլ համեմատաբար դեպքերում Մխիթարը ճիշտ չի արտահայտվում ասելով, թե լրացնում է մովսիսական օրենքը: Իրականում նա ոչ թե լրացնում, կամ ավելի ճիշտ այնպես է լրացնում, որ մերժում է այդ օրենքը: Ծիշտ է, մովսիսական օրենքների ինչ-որ մասը պահպանված է Դատաստանագրքում լիովին անփոփոխ և Մխիթարը առանց վերապահության ընդունում է դրանց նորմատիվ նշանակությունը, բայց դրանով քննվող հարցի էությունը չի փոխվում: Նույնիսկ ոչ-էական շեղումները Ս. Գրքից բացատրության անհրաժեշտություն էին առաջացնելու, որովհետև դրանք շեղումներ են Ս. Գրքից, և այն էլ, կատարված ժԲ դարում: Մինչդեռ առկա են Ս. Գրքից արմատապես շեղվելու և նրան հակադրվելու բազմաթիվ դեպքեր: Ընդամենն փոփոխությունները կատարված են որոշակի նպատակադրումով ու սկզբունքով: Մովսիսական օրենքների հին ձևի մեջ դրված է նոր բովանդակություն՝ կամ ըստ հայկական սովորութեան իրավունքի, կամ ըստ Մխիթարի իրավահայեցողության:

Եթե Մխիթարը մեջ էր բերում մովսիսական օրենքը, ապա այն չպետք է փոխեր, ինչպես արել է մի քանի դեպքում: Իսկ եթե փոխելու էր, և այն էլ այնպես, որ սկզբունքորեն հակառակն ստացվեր, ապա անիմաստ էր դառնում Հնդամատյանը վկայակոչելը: Առանց դրան էլ նա կարող էր ուղղակի սահմանել իր նորմը: Ստացվում է այնպես, որ Մխիթարին անհրաժեշտ է եղել ոչ թե.

մովսիսական օրենքը, ավելի շուտ ոչ այնքան բուն օրենքը, որքան դրա ձևը։ Իսկ այդ ձևը կարող էր պետք գալ Մխիթարին միայն նրա համար, որպեսզի բարձրացնեն իր նորմերի արժեքը, հեղինակության ավելի մեծ ուժ տար դրանց։ Ուրեմն, Մխիթարին պետք է եղել պատրանք ստեղծել, որ նա միշտ հետևում է Ս. Գրքին։ Ինչպես կտեսնենք ստորև, մեր այս հետազոտությունը հաստատվում է նաև իրեն՝ Մխիթարի վկայությամբ։ Պետք է խոստովանել, որ Մխիթարին շատ լավ հաջողվել է ստեղծել այդ պատրանքը, որովհետև ոչ միայն միջնադարում, այլև մեր օրերում, հավատացել են դրան նույնիսկ այնպիսի լրջամիտ հետազոտողներ, ինչպես Բաստամյանցը, Կարստը, Սամվելյանը և այլք։

Հատկանշական է հետևյալ պարագան։ Դատաստանագրքի Դ խմբագրությունը զգալիորեն համառոտված է։ Ըստ որում համառոտելու ամբողջ աշխատանքը կատարվել է ոչ թե իրավաբանական միտքը, իրավական դրույթները կրճատելու հաշվին, այլ իրավական բովանդակությունը կրճատելու ձևից, կրճատելու հավելումներից զտելու ուղղությամբ։ Զիշտ է, Գ խմբագրությունում Դատաստանագրքի ոչ բոլոր հոդվածներն են լիովին զտված կրճատելու տարից, սակայն նկատի ունենալով ժամանակը և նախատիպ խմբագրությունը, այն նվազագույնի է հասցված։ Ներկա հոդվածի հարցադրման տեսակետից նշանակություն չունի, թե ինչ եղանակով, ամեն անգամ ինչ չափով, որ դեպքերում (և այլն) է դուրս մղված կրճատելու տարրը Դ խմբագրությունից։ Ուշագրավն այն է, որ արդեն ԺԳ դարի սկզբներին, Դատաստանագիրքն ստեղծվելուց գուցե 20 տարի էլ չանցած, և դեռ հեղինակի կենդանության օրոք ավելորդ է համարվել հայկական Դատաստանագրքի համար կրճատելու տարրը, մովսիսական օրենքների ձևը, և, որ ամենից էականն է, փորձ է արվել ազատվելու այդ ձևից։ Դ խմբագրության և, մանավանդ, Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի գոյությունը պերճախոս ապացույց է այն բանի, որ մովսիսական օրենքների ձևը անհարիր է հայկական Դատաստանագրքի ոգուն, չի բխում նրա բովանդակությունից, պայմանավորված չէ նրա էությամբ։ Այդուհանդերձ այն առկա է։

Այստեղ և վերն առաջացած մի շարք «ինչու»-ներին պատասխանելու համար, բարերախտաբար, ենթադրություններ անելու անհրաժեշտությունը վերանում է։ Մխիթարն ինքն է պատասխանել այդ հարցերին։ Նախադրության Ժ գլխում Մխիթարը սրտի ցավով գրում է. «Բայց վայելուչ եղեալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղեալ սա (Դատաստանագիրքը—Խ. Բ.), զոր և ևս ախորժելով խնդրէի (ՎՁԲ. բաղձանօր հայցէի), բայց ոչ պատահեաց այս վասն բազում պատճառի, զի թէ դատաւորաց երկուց և երից ի միասին լինել ի դատելն իրաւունս լինել համարեցաք, որչափ ևս առաւել ևս այսր պարտ էր ի միասին լինել բազմաց և քննել զիրս ևս ապա գրով դրոշմել։ Բայց զի այս ոչ պատահեաց, վասն այնոցիկ գայսոսիկ պակասութիւնն և զրովմ լնումմ, զնոցա զօրութիւնն և զհրամանն առնումմ վկայ»¹⁶։

Մխիթարի խոստովանությունն ավելի քան արժեքավոր է։ Այս վկայությունը լույս է սփռում Մխիթարի ստեղծագործական ընթացքի և Դատաստանագրքի պատմության մի քանի կարևոր, բայց մովմ կետերի, այդ թվում և մեզ անմիջականորեն հետաքրքրող հարցի վրա։

Այգային դատաստանագիրք ունենալու խնդիրը ԺԲ դարի Հայաստանում

16 «Դատաստանագիրք հայոց», էջ 68։ Ընդգծումը մերն է։

վաղուց անհրաժեշտություն էր դարձել և լրջորեն մտահոգում էր ժամանակի աչքի ընկնող մտավորականներին: Դա երևում է ոչ միայն Մխիթարի նախադրությունից, այլև ներսես Լամբրոնացու հայտնի հիշատակարանից: Ահա, ժամանակի հասունացած այդ պահանջներից ելնելով Մխիթարը վաղուց ի վեր մտադրվում է համալգային նշանակություն ունեցող մի դատաստանագիրք գրել: Այդպիսի մեծ և պատասխանատու ձեռնարկություն իրականացնելու մտավախությունից բխող որոշ տատանումներ հաղթահարելուց հետո, Մխիթարն անցնում է գործի: Եվ ահա Դատաստանագիրքը պատրաստ է: Բայց Մխիթարը քաջ գիտակցում է, որ մասնավոր անձի կողմից կազմված մի դատաստանագիրք չի կարող համալգային ընդգրկմամբ գործադրվել առանց համալգային սանկցիայի («Բայց վայելուչ եղեալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղեալ սա»): Եվ նա «ախորժելով խնդրում» ու «բաղձանօք հայցում» է, որպեսզի իրավասու մի ժողով դումարվի՝ Դատաստանագրքին օրենսդրական ուժ տալու համար: Ինչ-ինչ պատճառներով, հավանաբար նաև քաղաքական անբարենպաստ իրադրության հետևանքով, ժողով չի գումարվում: Մխիթարը կանգնում է փակուղու առաջ: Դատաստանագրքին պակասում է օրենսդրական ազդյունից բխած լինելու ուժը: Անհաջող փորձից հետո այդ ուժը գտնել ալլևս հնարավոր չէ: Ի՞նչ անել: Մխիթարն ստիպված սկսում է մտածել այդ ուժը մի այլ, բայց համանման ուժով փոխարինելու մասին: Եվ նա գտնում է ելքը: «Բայց զի այս ոչ պատահեաց, վասն այնորիկ պայտոսիկ պակասութիւնն և գրովք ընումք, զնոցա զօրութիւնն և զհրամանն առնումք վկայ: Դատաստանագրքին օրենսդրական ուժ տալու համար Մխիթարը դիմում է մի ազդյունի, որի ուժը (ժամանակը նկատի ունենալով) թերևս ավելի մեծ էր, քան ալգային ժողովինը: Մխիթարը դիմում է Ս. Գրքին, որի «զօրութեամբ» ու «հրամանով» էլ լրացնում է իր Դատաստանագրքի օրենսդրական ուժի պակասությունը:

Այս տեսակետից անհետաքրքիր չէ զուգահեռը Մխիթարի և Սմբատ Սպարապետի միջև:

Մխիթար

Բայց վայելուչ եղեալ՝ թէ ժողովով կամ ընդ բազումս քննելով էր եղեալ սա. զոր եւ ես ախորժելով խնդրէի... Բայց զի այս ոչ պատահեաց, վասն այնորիկ պայտոսիկ պակասութիւնն եւ գրովք ընումք, զնոցա զօրութիւնն եւ զհրամանն առնումք վկայ:

Սմբատ

Եւ ի յայս տեղս չկարցի ես գրաւդս Սմբատս զինչ սուրբն Սահակ գրել էր ի հաւս արինաւք ի հին եւ ի նոր կտակարանցն ու պնդել եւ խրատել էր՝ նա եւս թէ վայն վամենն գրել էի՝ նա կարի շատ էր լել. բայց վայսչաքս պատեհ համարեցայ գրել¹⁷:

Սմբատը կարիք չի զգում իր օրենքներին ուժ տալու համար «գրոց զօրությանը» կամ սուրբ հայրերի հեղինակությանը դիմելու: Մխիթարի Դատաստանագրքից փոխառված բոլոր հոդվածներից նա զուրս է թողել կրոնական հավե-

¹⁷ См бат Спарамет, Судебник, перевод с древнеармянского, предисловие и комментарии А. Галстяна, Айпетрат, Ереван, 1958, стр. 41.

լումները, մանավանդ մովսիսական օրենքների ձևը: Ինքնավստահ անհոգութեամբ Սմբատը կրճատում է նույնիսկ հայկական եկեղեցու շատ հեղինակավոր հայրերի կանոնները: Պատճառաբանությունն էլ զուտ ձևական է՝ կանոնների երկարաբանությունը: Սմբատը կարող է այդպես վարվել: Նրա դիրքն ու հեղինակությունը և՛ իրավունք, և՛ իրական հնարավորություն են տալիս դրա համար: Մխիթարը չի կարող Սմբատի նման վարվել: Նա չունի վերջինիս հնարավորությունները: Երկրի ներսում գրաված հասարակական-քաղաքական դիրքի տեսակետից շատ է մեծ տարբերությունը նրանց միջև: Սմբատը իշխող է և հրամայող: Նա պետություն է ներկայացնում: Այդքանը ավելի քան բավարար է շմտահոգվելու, որ կկարողանա պարտադրել իր կամքը մյուսներին: Որտեղ բավական չլինե՞ր Սմբատի հեղինակության ուժը, այնտեղ դրությունը կարող էր հարթել նրա շատ իրական ուժի հեղինակությունը:

Մխիթարը ոչ իշխող է և ոչ հրամայող: Նա ունի հեղինակության ուժ, բայց ոչ երբեք ուժի հեղինակություն: Մխիթարը կարող է միայն համոզել, ապացուցել, բայց ոչ պարտադրել: Նա շատ լավ գիտակցում է այդ և թրովհետև չունի պարտադրելու ուժ՝ Վասն այնորիկ զայսոսիկ պակասութիւնն եւ գրովք լնումք, զնոցա զօրութիւնն եւ զհրամանն առնումք վկայ»:

Զուր մտավախություն: Ժամանակի պահանջը շատ ստիպողական էր, որպեսզի Դատաստանագիրքը, առանց արհեստական այդ զորության, միայն ազգային լինելու փաստով, նվաճեր իր իրավունքները: Բայց այս հանգամանքը մեզ երևում է հետագա դարերի բարձունքից, իսկ Մխիթարին չէր կարող երևալ (գոնե սկզբում), ուստի նա չէր կարող շմտահոգվել: Ինչևէ, Մխիթարի վերոբերյալ վկայությունը մի շարք կարևոր եզրահանգումների հիմք է տալիս:

Մխիթարը դիմել է Ս. Գրքին, մանավանդ մովսիսական օրենքներին, հարկադրված, իր ցանկությանը, մտադրություններին և աշխատության բնույթին հակառակ: Դիմել է միայն նրա համար, որ Դատաստանագրքին օրենսդրական ուժ տալու միակ հնարավոր միջոցը այդ է համարել (ազգային ժողովի գումարումը ձախողվելուց հետո):

Ուսումնասիրողներից ոչ ոք ուշադրություն չի դարձրել այս հանգամանքի վրա: Այդ պատճառով Դատաստանագրքի բնութագրման ու գնահատման հարցում հաճախ ծայրահեղությունների մեջ են ընկել:

Մխիթարի վկայության մեջ հատկապես ուշադրավ է հետևյալ կետը: Նա դիմել է Ս. Գրքին և նրանով զորություն տվել իր Դատաստանագրքին միայն և միայն այն բանից հետո, երբ չի հաջողվել ազգային ժողով գումարել: Նշանակում է, մինչ այդ, մինչ Ս. Գրքին դիմելը Մխիթարն արդեն ունեցել է ավարտված, պատրաստի Դատաստանագիրք, հակառակ դեպքում նա ոչինչ չէր ունենալ ժողովի քննարկմանը ներկայացնելու, անիմաստ կգամնար նույնիսկ ժողովի գումարման հարցով զբաղվելը: Ուրեմն, Մխիթարը փոփոխության է ենթարկել արդեն ավարտված, պատրաստի Դատաստանագիրքը: Այդ փոփոխություններն արտահայտվել են նրանով, որ նա աշխատել է «զրոց զորությամբ» օրենսդրական ուժ տալ Դատաստանագրքին: Այսինքն, Մխիթարը մովսիսական օրենքներից մի քանիսը ղետեղել է Դատաստանագրքում նույնությամբ, իսկ ավելի հաճախ իր հոգվածների մի մասին նախակցել է համապատասխան կամ առերևույթ համապատասխան հատվածները Հնգամատյանից: Մխիթարն իհարկե չէր կարող հայկական իրավունքը վերափոխել, ըստ մովսիսական իրավունքի: Դա պարզապես անհնար էր: Տարրեր են այդ իրավունքների

թե սոցիալ-տնտեսական հիմքը, թե հասարակական-քաղաքական միջավայրը, և թե իրեն՝ Մխիթարի իրավահայեցողությունը: Այդպիսի պայմաններում մովսիսական օրենքներին դիմելը և դրանք հայկական Դատաստանագիրք ներմուծելը չէր կարող ձևական բնույթ չկրել: Այդ է պատճառը, որ մեծ մասում Դատաստանագրքի այն հոդվածների, որոնց աղբյուրը մովսիսական օրենքներն են համարվում, այդ օրենքները կամ մերժված են, կամ էլ ակնհայտորեն ավելորդ տեղ են գրավում:

Այսպես, ուրեմն, Մխիթարը դիմել է մովսիսական օրենքներին այն բանից հետո, երբ նրան չի հաջողվել ազգային ժողով գումարել: Դրանից հետո է, որ արդեն ավարտված, պատրաստի Դատաստանագիրքը Մխիթարի կողմից փոփոխությունների է ենթարկվել: Այստեղից ինքնին բխում է շատ կարևոր մի հետևություն. Դատաստանագրքի Ա խմբագրությունը սկզբնականը չէ: Ա խմբագրությունը կազմվել է հետո և սկզբնականի հիման վրա: Հետևապես Դատաստանագիրքն ունեցել է մի խմբագրություն ևս՝ սկզբնականը:

Հարցն ավելի լավ պատկերացնելու համար անհրաժեշտ ենք համարում մի քանի խոսք ասել այստեղ Դատաստանագրքի մյուս խմբագրությունների մասին ևս¹⁸:

Մինչև այժմ գիտական շրջանառության սեպ էր գտնվում Մխիթար Գոշի Դատաստանագրքի մի խմբագրություն միայն, այն, որ հրատարակված է Վ. Բաստամյանցի կողմից 1880 թվականին: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Դատաստանագրքի մոտ 40 ձևագրերի համեմատությունը, սակայն, ցույց տվեց, որ Վ. Բաստամյանցի կողմից հրատարակվածը ոչ միայն Դատաստանագրքի միակ խմբագրությունը չէ, այլև սկզբնականը չէ: Դատաստանագրքի ձևագրերը բաժանվում են երեք մեծ խմբի, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է առանձին խմբագրություն: Խմբագրություններից առաջինը (Ա) ներկայացնում են Վենետիկյան հնագույն, Զմամառի № 8ա (ըստ Քեշիշյանի ցուցակի) և մեր մատենադարանի № 209 ձևագրերը, երկրորդը (Բ)՝ մեր մատենադարանի № 488 (Բաստամյանցի հրատարակած) ձևագիրը, երրորդը (Բ)՝ մեր մատենադարանի № 2593, 2776 և այլ ձևագրերը:

Խմբագրություններն իրարից տարբերվում են արտաքին՝ ձևական-կառուցվածքային և ներքին՝ էական մի շարք հատկանիշներով:

Ա և Գ խմբագրություններում Դատաստանագիրքը բաղկացած է երկու մասից՝ Նախադրություն և բուն օրենքները, որոնք հաջորդում են իրար թվահամարների սովորական հերթականությամբ սկսած մեկից: Բ խմբագրությունում Դատաստանագիրքը բաժանված է երեք մասի՝ Նախադրություն եկեղեցական կանոններ և աշխարհիկ օրենքներ: Ա և Գ խմբագրությունում Դատաստանագիրքն ունի 251 հոդված, Բ խմբագրությունում՝ 254: Նրեք խմբագրություններն էլ իրարից արմատապես տարբերվում են մի շարք այնպիսի հոդվածներով, որոնք արտահայտում են դասային-դասակարգային հակադիր շահեր:

Դատաստանագրքի խմբագրություններն ստեղծվել են 1184 թվականից 1200-ական թվականների ընթացքում Ա-ից Գ հաջորդականությամբ: Սակայն,

¹⁸ Դատաստանագրքի խմբագրությունների հանգամանալի քննությունը տե՛ս մեր հետևյալ հոդվածներում. «Ներկու խմբագրություն Մխիթար Գոշի Դատաստանագրքի», Բանբեր մատենադարանի, № 6, «Մխիթար Գոշի Դատաստանագրքի ձևագրերն ու խմբագրությունները», Պատմա-բանասիրական հանգես, 1963, № 1:

ինչպես պարզվեց ներկա հողավածից և հատկապես Մխիթարի վկայությունից, Դատաստանագրքի առաջին խմբագրությունը ժամանակագրական առումով ոչ թե Ա-ն է, այլ այն, որ Մխիթարը ուզում էր ներկայացնել ազգային ժողովի հաստատմանը, և որի հիման վրա կազմվեց Ա խմբագրությունը: Հետևապես, դատաստանագրքի սկզբնական խմբագրությունն ունեցել է այլ նկարագիր, հատկապես բովանդակության առումով, քան գոյություն ունեցող խմբագրությունները: Ամենից առաջ նրա մեջ չեն եղել Աստվածաշնչի այն ընդարձակ հատվածները, որ կան այժմ:

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ունեցել է չորս խմբագրություն՝ սկզբնական և Ա, Բ, Գ, որոնցից սկզբնականը մեզ չի հասել, համենայն դեպս մեզ ծանոթ ձևագրերում չի պահպանվել: